ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ARMENIAN TERRITORIAL DEVELOPMENT FUND

N Ե/04/1156-23 «14» 06 2023թ.

ՀՀ, Արարատի մարզ, ք" Վեդի, Կոմիտաս 1
«Վեդի Պլաստ» ՍՊԸ-ի տնօրեն՝
պրն. Ա. Պողոսյանին

Հարգելի պարոն Պողոսյան

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ու «Վեդի Պլաստ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2021 թվականի մայիսի 20-ին կնքվել է թիվ ՀԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2021/1 «ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Տավուշ բնակավայրի խմելու ջրագծի վերակառուցման» աշխատանքների կապալի պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.3-րդ կետով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 270 օր:

Ըստ Հիմնադրամի և Ընկերության միջև 2022 թվականի փետրվարի 11-ին կնքված Համաձայնագիր թիվ 1-ի՝ աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է և սահմանվել 300 օր:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկզբնական արժեքը կազմել է 73,200,000 դրամ, որը ըստ Հիմնադրամի և Ընկերության միջև 2022 թվականի մարտի 16-ին կնքված Համաձայնագիր թիվ 2-ի՝ փոփոխվել է և կազմել 71,685,629 դրամ:

Փաստացի մինչ օրս Ձեր կողմից չեն կատարվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները և շինարարական աշխատանքների արդյունքը հանձնված չէ:

Հաշվի առնելով վերը նկարագրվածը՝ սույն գրությամբ ծանուցվում եք այն մասին, որ Ձեր կողմից Պայմանագրի 3.1.4-րդ կետի «բ» ենթակետը խախտելու հիմքով Հիմնադրամի և Ընկերության միջև 2021 թվականի մայիսի 20-ին կնքված թիվ ՀԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2021/1 «ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Տավուշ բնակավայրի խմելու ջրագծի վերակառուցման» աշխատանքների կապալի

պայմանագիրը 2023 թվականի հունիսի 15-ից համարվում է լուծված, ուստի և շինարարական հրապարակում կատարվող աշխատանքները այդ օրվանից ենթակա են դադարեցման:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն Ս. Բաղինյան

Invalid signature

X

ՍԱՐԳԻՍ ԲԱՂԻՆՅԱՆ

Signed by: BAGHINYAN SARGIS 1404640118

Կատարող՝ Ա.Իսախանյան
Ն: Տեր-Պետրոսյան
Հեռ. (010) 24 71 23